

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔՆՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. V, 1895.

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.

U. S. America.

Կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է

ամեն երկրաց համար

երկու տալեր կամ տասն Ֆրանք

Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Խմբագրական Ոչմարք,— Եւրոպա և Հայ
ցեղն.— Տէրութիւնը և Հայաստան.— Այսըն-
եամ և Հայերէն լեզուն. Հայերէնի բաւոյժ Հա-
յաստանի կապուած.— Նամակ Կ. Պոլսէ.— Ծը-
րագիր Թուրքոյ բաշխման.— Օգնութիւն սո-
վատած կէս միլիոն Հայերու.— Առ Ամերիկա-
բնակ Հայս.— Այլևայլ.— Ցամկ միւթոց.

ԽԱՐԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՌ ՎՇՏԱԿՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՍ

Ամենասիրելի՛ արեւակիցք մեր,

Հայրենիքէն հեռու գտնուող Հայե-
րն ձեր ահաւելի վշտաց լուրերն օր ըստ

օրէ առնով մասնակից կը լինինք նահա-
տակելոց սուգին և յաւաքին աղօթքնե-
րուն: Եթէ երբէք պատահի որ հոգեկան
սոսկումով վայրկեան մի ընկճինք, նորէն
վեր կը բարձրացնենք մեր յուսալիր գը-
լուխներ և կը շարունակենք նորոգուած
ուժով մեր աշխատանք: Մի՛ յուսահատիք,
Տէր ընդ մեզ է: Այս չարիք իրաւ անցան
զանցան ամեն երեւակայելի սահման և կը
չփոթեն հաւատացելոց միտքն, բայց Հա-
ւատանք թէ բարիքն ալ որ պիտի ծագի
մեր ազգին և բոլոր Թուրքիոյ համար իր-
բեւ հետեանք, պիտի լինին նոյնքան և ա-
ւելի մեծ: Ուրեմն անյողդողդ մնանք իր-
բեւ ոռորդ դատի մի զոհուող նահատակ-
ներ և դիմանանք անվհատ:

Մեր սրտերու խորագոյն խորէն կը
յղենք ձեզ ամենուդ անհուն սիրոյ և անձ-
կանաց բարեւներ՝ ուխտելով անեւ հաւա-
տորմօրէն զբոլոր կարելին մեր և թերեւս
ինչ որ անկարելի իոյ կը թուի, մինչեւ
որ Հօգորին ձեռքն հասնի բնաջինջ անելու
թուրք բռնակալութեան ամբողջ եղեռնա-
կան դրութիւնն և փրկէ զանմեզ Հայու-
թիւն:

Բան զամենայն միտքարական լուրն
որ կրնանք հաղորդել ձեզ է այս մեծ երկ-
րին, Միացեալ Նահանգաց մէջ, յարուց-
ուած ազգային համակրութիւնն մեր ժողո-
վրդին համար, որ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ
ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ միջոցով անմիջա-

պէս ահագին նպաստ բաշխելու կը ձեռնարկէ։ Ընկերութեան նախագահ Հռչակաւորն ՔԼԱՐԱ ՊԱՐԹԸՆ հաւանած է, նաև միջազգային նախագահն որ ի Զուիցերիա՝ հաւանած է որ ընկերութիւնն իւր ձեռք առնու զՀայաստան կերակրելու և հագուեցնելու գործն որ քան զամենայն մարդասիրականն է, կը խոստովանին, բոլոր մարդասիրական ձեռնարկներուն որոյ երբէք առիթն ներկայացեր է քաղաքակիրթ մարդկութեան։ Նախագահն, ծերունի օրիորդ Պարթըն, անձամբ պիտի երթայ Հայաստան, գալ շարթու մեկնելով աստի, և բոլոր պաշտօնեայք լուր տուած են թէ պատրաստ են ճամբայ ելնելու ութ ամսուան աշխատանքի համար Հայոց մէջ։ Հինգ միլիոն տոլարի հանգանակութեան պէտք կայ և պիտի հանգանակուի կը յուսան։

* *

Յափանց Եփրատայ մեզ յղուած երկար տեղեկագիրն չկրնալով զետեղել Հայքում, պիտի թարգմանեմք Անգլիերէնի և հրատարակենք Նիւ Եորքի ամերիկեան թերթերուն մէջ։ Նոյնպէս պիտի անենք Կ. Պոլսէն մեզ յղուած երկար տեղեկագիրն։

* *

Ներկայ թուով կուտամք Թուրքիոյ բաշխման նոր ծրագիր մի, որովհետև այլ ևս բարեկարգութեան ծրագիրներ հրատարակելու շրջանն փակուած է, ու, շրջանորհիւ վեհ. Սուլթանին ապուշ և ապշեցուցիչ քաղաքականութեան, բաշխման, իբրեւ միակ դարմանի, ծրագիրներ կը հրատարակուին ու կը քննուին։

* *

ՀԱՅՔԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՅ

Նախորդ տարիներ Յունուար մէկի թիւն զանց կ'անէինք որովհետև մեր բաժանորդներ դանդաղ կը շարժէին նորոգելու իրենց բաժանորդագրութիւն։ Սակայն 1896ի Յունուար մէկին պիտի ըյս տեսնէ Հայքի յաջորդ թիւն և պիտի շարունակուի ամիսն երկու անգամ հրատարակուիլ։ Միայն թէ կը յուսանք որ մինչև Յունուար մէկ գոնէ Ամերիկայի մեր բաժանորդք նորոգած պիտի լինին։ Պէտք

է յիշել թէ մեր պայմանն է կանխիկ վճարում, տարեկան 2 տոլար։ Թէ Ամերիկայէն թէ այլ երկիրներէ դրամ յղելու կերպերն ուրիշ էջի մէջ նշանակած եմք։

Եթէ մինչև Յունուար մէկ մեր նոր ցանկն ամբողջացած կամ գրեթէ ամբողջացած չլինի գոնէ Ամերիկայի համար, պիտի ստիպուինք կէս ամիս սպասել, այսինքն մինչև Յունուար 15։

Հայքի 1896 տարին համարձակ կերպով սկսելու այս մեր որոշումէն թող չկարծուի թէ ու է մեծ նպաստ հասած է մեզ։ Իշխան Լուսինեան միայն յղած է իւր տարեկան բաժնեգիրն առատաձեռն որ է 10 տոլար, և երկու անգամք Հայքասիրաց Միութեան Ծական տոլար։

Այն ամեն հայրենակիցք որ նիւթապէս և բարոյապէս օգնեցին ՀԱՅՔԻ և հասուցին զայն իւր վեցերորդ տարեշրջանին, կը յուսանք թէ պիտի շարունակեն իրենց աջակցութիւն, և որովհետև այդ բոլորն բաւական եղած չեն այս թերթի հրատարակութեան ծախուց, ջերմ կոչում կ'անենք նպաստներու և բաժանորդագրութեանց անման համար որպէս զի կարենանք առանց աւելորդ չարչարանքի շարունակել մեր գործ որոյ մէկ մասն միայն է Հայքի հրատարակութիւնն։

Պատասխանեցէք, հայրենակիցներ, և պատասխանեցէք վաղ նդ փոյթ։

Վեց Տէրութեանց դեսպաններն իրենց ազգայնոց ապահովութեան համար ի Կ. Պոլիս, պահանջեցին Սուլթանէն հրաման մէկ մէկ պահակ շոգենաւ ևս ունենալու Պոլսոյ առջև։ Այս պահանջ դաշնագրական տրամադրութեանց համաձայն էր, բայց Սուլթանին անհաճոյ երեւցաւ իբրև վիրաւորիչ իւր վեհանաճնութեան։ Մի քանի շաբաթ դիւանագիտական պոյքար մը զեցին երկուստեք, վերջնագիր յղել ըստ պառնացան դեսպանք, կամ առանց Համիտի հրամանին ներս բերել նաւերն։ Հասարակ վերջապէս Փէրման տուաւ։ Եւ այսօր, Դեկտ. 12, հեռագիրն կ'ասէ թէ դեսպանք ծանուցած են Սուլթանին թէ չեն կարծեր որ յաւելուածոյ պահակաւաւեր պիտի մուծանեն ներս։ Ուրեմն, կ'ազդակեն թերթք հեգնօրէն, այս ամենն ժամանակ անցունելու համար կատարուող զաւեշտներ են։ Ի՞նչ օգուտ կայ մեռնող Հայոց այդ ամենէն։

Ե Ի Ր Ո Պ Ա

Ե Ի

Հ Ա Յ Ց Թ Ե Ղ Ն

Մորթուած Հայոց թիւն 60,000ի կը հանեն ստոյգ տեղեկութիւնք, և Պատրիարք Հայրն կը հաշուէ թէ կէս միլիոն Հայեր տնանկացած են: Սրոյն գործն դեռ բոլորովին դադարած չէ, բայց եթէ դադարի իսկ, կործանիչ բաւական պատճառներ պատրաստուած են մէկ տարուան մէջ զՀայաստանեայս այնքան մահու և ցրման ենթարկելու որ այլ ևս իբրեւ որոշ ձգտումներու և պահանջմանց իրաւունք ունեցող ժողովուրդ հաշուէ դուրս թողուի: Այս կը լինի Սուլթանին մեծ յաղթանակն ոչ թէ մեր ցեղին վերայ միայն այլ և բովանդակ Եւրոպիոյ: Բայց ի՞նչ կորստաբեր յաղթանակ Օսմանցւոց հաշուոյն և ի՞նչ անարգ պարտութիւն Եւրոպիոյ քաղաքակրթութեան համար:

Հաւանական է թէ Սուլթանն իւր հայաջինջ քաղաքականութեան վերայ կը ծափահարէ ինքզինք, բայց եթէ ողջ մընայ՝ պիտի տեսնէ թէ զՀայս կործանելու ատեն կործանած է նաև զիւր կայսրութիւն: Եւ եթէ հաւանականութեան չափը մօտենայ Հայոց ջնջումն, բացարձակ ստուգութիւն մ'է Օսմանցւոց կործանումը:

Համիտի հայաւեր քաղաքականութեան այս յաջողութիւնն ծանր նախատինք մ'է դաշնադիր մեծ ազգաց Եւրոպիոյ: Անուրանալի է թէ մեր խնդիրն ունի անսովոր կնճռոտութիւն և դիւրին չէր լուծել զայն, բայց ներկայ ճգնաժամու մէջ Եւրոպիոյ վարանումն չի կրնար արդարացուիլ ունէ կերպով: Գաղտնիք չէ Հայոց թէ Եւրոպա իրենց համար չի զգար ջերմ համակրութիւն որպիսի զգուց Յունաց, և Պալքանեան ցեղերուն նկատմամբ: Մենք ասիացի ենք, և Եւրոպա այնքան ամօթ և պատասխանատուութիւն չի զգար Եւրոպիոյ սահմանէն դուրս կատարուած խժդժութեանց համար: Նաև Հայաստան ներցամաքային երկիր զուով Եւրոպական բանակաց և նաւատորմերու անմատչելի է, ուրե-

մըն չի կրնար անմիջապէս և առժամապէս ենթարկուիլ զինուորական գրաւման և հովանաւորութեան: Եւ ոչ ժխտելիութենք թէ օսմանեան կայսրութենէն աւելի դիւրաւ կրնային անդամատուիլ Ռումանիա, Սերպիա ևն, մինչ Հայաստան՝ իբրեւ պետութեան ասիական բնոյն կից՝ նուազ ընդունակ է բաժնուելու յառաջ քան ընդհանուր բաշխման գործողութիւնն:

Սակայն այս ամեն նկատողութիւնք չեն արդարացներ զԵւրոպա որ կեցեր կը նայի մինչ Հայ ցեղն կը սրբուի երկրի երեսէն ի ձեռն այն սրոյն զոր Թուրքն կը բռնէ դեռ շնորհիւ քրիստոնեայ պետութեանց: Հայ ցեղն Եւրոպիոյ հողին վերայ չէ, բայց իմացականօրէն և ցեղաբանօրէն Եւրոպացի է: Եւ որ աւելին է, Եւրոպա, դաշնագրական յանձնառութիւն ունի Հայաստանի վարչութիւնն բարեկարգելու, և արդէն այդ է Հայոց պահանջն: Եթէ Եւրոպա կարող է իւր խոստում կատարել առանց զԹուրքիա բաշխելու, առանց զՀայաստան առանձին ինքնօրէն նահանգի վերածելու, թող կատարէ և մենք գոհ կը լինինք: Բայց իրաւունք չունի լոկ դիւանագիտական խեղկատակութիւններով ժամանակ անցունելու երբ Թուրքք ոտնակոխ արած կը ճմլեն բովանդակ Հայ ցեղն որուն ինքն իսկ սովբեցուց և իրաւունք տուաւ իրեն միջնորդութեան դիմել: Հայք Թրքի լծին տակ մնացեր էին դարերով, և կրնային մնալ կէս դար ևս մինչև լուծուէր արեւելեան խնդիրն, բայց Եւրոպա, մասնաւորապէս Անգլիա, յոյս տուաւ մեզ թէ հոգ պիտի տանի մեր երկրին բարեկարգութեան, և պատճառեղաւ մեր և Թրքին միջեւ սաստիկ ատելութիւն յառաջ բերելու որուն գոհ կ'երթանք ամբողջովին: Թրքին հետ հաշտուիլ չենք կրնար, Անգլիա պարտաւոր է զմեզ ազատել, և անմիջապէս ազատել, թէև լինի պատերազմաւ, թէև լինի զԿ. Պոլիս Ռուսիոյ թողլով:

Արթնցի'ր, Սօ'լլպէրի, և ազատելով զՀայաստան՝ ազատէ զՄեծն Բրիտանիա անջնջելի անպատուութենէ:

Կլատսթոն գրած է Նիւ Եորքի նպատամատոյց ընկերակցութեան գհետեւելն — «Տարակոյս ունիմ թէ Տէրութիւնք տրամադիր չեն իրենք գիրենք բոլորովին ծաղրելի հանդիսացնելու առաջի աշխարհի»:

Տ Է Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ե Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

(Հետեւեալն թարգմանութիւնն է նամակին որ հրատարակուեցաւ Նիւ Եորքի Հայոց Յանձնաժողովոյն կողմանէ «Սըն»ի Դեկտ. 8ի թուոյն մէջ ։)

Տէր ,

Ի վնինկ Փոստի Նոյ. 30 թուոյն մէջ նամակ մի երեցաւ , որ կ'առէ թէ «մեծ սխալ մ'է գՀայկական Խնդիրն կրօնական տեսակետէ նկատել ։» Այնու թղթակիցն կ'երեւակայէ քննադատել Հ. Հ. Դաշնակ-թեան մէկ նամակն՝ Սընի և Թրիպիւնի մէջ հրատարակեալ զոր հասկանալու ամե-նեւին պատրաստուած չէ ինքն ։ Կը փա-փաքինք , եթէ թոյլ տաք , յիշեցունել խորհող հանրութեան թէ անոնք որք զհա-յաթրքական տազնապն իւր կրօնական ե-րեսին ներքեւ դիտած են , այնպէս արած են ոչ թէ Իսլամութիւնն հարուածելու տենչով այլ վասն զի կրօնական տեսակե-տըն միայն կրնայ ընծայել թափանցումն ի խոր աղբիւրն խոռվութեանց և առաջ-նորդել ի յղացումն այն ազգու երաշ-խեաց առանց որոյ բարեկարգութեանց լա-ւագոյն ծրագիրն անգամ , որպէս Կլատո-թոն ասաւ , յոռեզոյն է քան անարժէք ։ Ինչ և իցէ ծրագիր բարեկարգութեան որ կը ճանաչէ Քրիստոնեայ Հպատակաց հա-ւասարութիւնն ընդ Միւսիւլմանին՝ հա-կառակ է Մահմետականութեան ոգւոյն և տառին , և ամեն անգամ որ Քրիստոնեայ Եւրոպայն հաւանած է Սուլթանաց կամ փաշաներու վստահիլ այդպիսի բարեկար-գութիւններ իրագործելու աշխատանքն , ծանրապէս սխալած է ։ Արդարութիւն ա-ռն և առն միջեւ երկուց կրօնից համար՝ չատ բաղձալի է , սակայն բոլորովին ան-գործնական է անդ ուր Քրիստոնեայն մահմետական իշխանութեան ներքեւ է ։ Կէս դարու անիմաստուն և չարաչար գոր-ծածուած համբերութենէն յետոյ հանդէպ Սուլթանաց՝ Եւրոպա կը թուէր լիովին հասկացած լինիլ թէ Դրան միջոցաւ Քը-րիստոնեայ գաւառաց մէջ բարեկարգու-

թիւն մուծանելու ամենեւին յոյս չկար , և մասնաւորապէս 1894ի Սասնոյ կոտորա-ծէն յետոյ՝ նա պահանջեց Հայկական բա-րեկարգութեանց գործադրութեան գոր-ծօն կերպով հսկել ։ Հայոց մասին դըժ-րադարար և ի մեծ ապշութիւն քաղա-քակրթեալ աշխարհի՝ Տէրութիւնք լքին իրենց պատասխանատու եղող բարձր Յանձնակատարի մի գաղափարն և թող տուին Համիտի իւր արարածներէն մին , զՇաքիր փաշա , կարգել վերատեսուչ բարեկարգութեանց գործադրման ։ Եւ նա իրաւ վերատեսուչ եղաւ մեծ կոտորածին գոնէ ի Կարին , ուր կանոնաւոր զօրքն կա-տարեցին խողխողելու և կողոպտելու գոր-ծին մեծ մասն ։ Կարնոյ զէպքն ինքնին բաւական է յորդառատ կերպով ապացու-ցանել Դրան և Տէրութեանց միջև կար-կառուած համաձայնութեանն եղեռնական հանգամանքն , սակայն ամենազարհուրելի և ընդարձակածաւալ կոտորածներ կանո-նաւորապէս և հսկայ ընդ հսկայ տեղի ու-նեցան ծրագրին Սուլթանի կողմէն վաւ-երացուելէն յետոյ , և աշխարհ լռիկ կը դիտէ «յթշուառական Սուլթանն որ յաղ-թանակաւ կը ծածուկէ իւր դրօշ» և զմեծ Տէրութիւններն առ ոստ նորա ։

Հեռագիրներն օր ըստ օրէ կ'աւտաց-նեն քրիստոնէից թէ քրիստոնեայ կառա-վարութիւնք ամենաջերմ ջանքեր կ'անեն յօգուտ Հայաստանի ։ Սակայն և այնպէս իրական մրցումն մակերեսի տակէն յա-ռաջ կ'երթայ Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ ։ Ռուսիա կ'ուզէ երկարաձգել ճգնաժամն ի վնաս բրիտանական ազդեցութեան և ի տպաւորել քրիստոնէից մտքին վերայ անգ-լիական քաղաքականութեան աղետալի հետեւանքն ։ Սակայն Հայք այնպէս յիմար չեն որ բոլոր մեղքն մէկ տէրութեան մի վերայ դնեն ։ Նոքա գիտեն թէ Սնգլիա է գլխաւորապէս պատասխանատու այն վեր-ջին 19 տարուան ամենազարչելի հարս-տահարութեանց զորս նոքա կրեցին ի ձե-ռքս Թուրքին , սակայն նոքա նոյնպէս լաւ գիտեն թէ այս պահուս Ռուսիա չի գոր-ծեր իրրեւ մեծ ախոյեանն քրիստոնեայ Հպատակացն Սուլթանաց ։ Նա կը ցուցնէ Անգլիոյ անձնասիրութիւնն իւրեան իսկ անձնասիրութիւնն երեւան բերելով ։ Իւ ոչ ալ այդ երկու կառավարութիւնք մի-այն են պատասխանատու ։ Բոլոր վեց մեծ պետութիւններն հաւաքապէս այս ժա-

մուս կը ներկայացունեն տեսարան մի որ Հայ մարտիրոսաց կը թուի այնքան սոսկալի, թէն փարբեր կերպով մի, որքան արհաւիրք թրքական բռնակալութեան: «Հայ մարտիրոսաց» ասինք, և կը յուսանք թէ վերջին հեռագիրք որք կը ծանուցանեն թէ աւերեալ գաւառաց մէջ քրիստոնէից կ'առաջարկուի ընտրել զմահ կամ զմահմետականութիւն, չեն թողուր ուէ բանաւոր տարակայս ի մասին ճգնաժամին ընթերցանն:

Թող քաղաքակրթեալ ազգք և ազինք գիտնան, Տէր, թէ ճգնաժամն քաղաքական չէ: Հայք չեն ձգտիր քաղաքական անկախութեան, այլ ամենաջերմ կերպով հետամուտ են ձեռք բերելու իրենց համար կառավարութիւն մի որոյ ներքե կարենան ազատօրէն պաշտել զիրենց Աստուած, դաստիարակել իրենց գաւառներն, և պահպանել իրենց ընտանեաց նուիրականութիւնն: Յանուն մեր նահատակուող Հայրենեաց, ուրեմն, կը կոչենք եւրոպայի քրիստոնեայ ժողովուրդներն և մասնաւորապէս զՄիացեալ Նահանգացն՝ լինիլ վկայ Հայաստանի ուստերց ու դըստերց որ պիտի շարունակեն մեռնիլ ու պիտի մեռնին մինչև ցվերջին հոգին, բայց երբէք պիտի չընդունին նորէն միւսիւրմանի ուղղակի իշխանութիւնն, երբէ՛ք:

Ի դիմաց Նիւ Եորքի մնայուն Յանձնաժողովոյ.

Ատենադպիր

Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

Ատենապետ

Մ. Ս. ԳԱՅՐԻՔԼԵԱՆ

Դեկտ. 6, 1895

Նիւ Եորք քաղաքի և շրջակայից Հայրեն, ընդհանուր ժողովի մի մէջ ի 20 նոյեմբերի, ընտրեցին մնայուն Յանձնաժողով մի, որում հեղինակութիւն տուին յանուն իրենց խօսելու և գործելու ներկայ Հայկական ճգնաժամուն տեւողութեան ատեն: Յանձնաժողովն կը բաղկանայ 5 անդամներէ և կազմակերպուած է հետեւեալ կերպով. Մ. Ս. Գաբրիէլեան՝ ատենապետ, Ա. Այվազեան՝ ատենադպիր, Յովհաննէս Պ. Հայկունի՝ գանձապետ, Հ. Մ. Քիրէճեան և Հ. Մարկոսեան:

ՍԸՆ

Ա Յ Տ Ն Ե Ա Ն

Ե Ի

Հ Ա Յ Ե Ր Է Ն Լ Ե Զ Ո Ւ Ն

ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՂԴՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՊՈՒԱԾ

(Ազգային ճգնաժամն 1895 տարեշրջանին մէջ բնաւ տեղ չթողուց «Հայքի» «գրական» մասին: Տարւոյս վերջին թուով այս կարճ յօդուած կը նուիրեմք ազգային լեզուի խնդրոյն՝ Գեր. Այտնեան Հօր յիսնամեակին առթիւ:)

Այտնեան՝ աշխարհէն զատուած վանական՝ աշխարհիկ լեզուի գրական իրաւանց մեծագոյն փաստաբանն եղած է: Երեւոյթ անսովոր, սակայն Այտնեան ալ սովորական վանական մի չէ: Նա գիտնական կերպով ուսումնասիրեց մեր ռամկօրէնին շրջափոխութիւնն դարէ ի դար, և անոր արմատներն հին ժամանակաց հայերէնին մէջ ընդհարել գիտցաւ: Ռամկօրէնի ծննդաբանութիւնն այսպէս գըտնելով՝ կրցաւ, ի միջի այլոց, արդի հայերէնի ինչ ինչ մասնկաց և մակբայից ուղիղ և ճիշդ ձեւն նշանակել, օրինակի համար «կու» կամ «կը» ծագումն և «չ» բացասական մակբային «չի» ձեւն, զորս, ասինք ի փակագծի, դեռ չատեր յախուռն կը գործածեն՝ կարծելով թէ չի և չնոյն են, և ստեղծած են նաև «չը» որ բոլորովին աղաւաղ և աւելորդ է:

Յաւալի է որ Այտնեանի գործն շարունակող և ամբողջացունող ու է մէկը չունեցանք: Մեր արդի հայերէնն, զոր աշխարհաբար ևս կը կոչենք, դեռ կարգի բերուած, կազմաւորուած չէ: Դեռ բազում քննութեանց տեղ կայ, և տակաւին շատ ուղղութիւններ և յաւելումներ պարտի ընդունիլ մեր լեզուն իւր որոշ կերպարան ու յաղթ իրան առնելու համար:

Մեր Պոլսեան գրագէտներուն շատերն եռանդով կը գովեն աշխարհաբարին սիրուն միամտութիւնը, յստակութիւնը, ճկուն և թարմ գեղեցկութիւնը և արդի

մտածումներ արտայայտելու յարմարութիւնը: Արդեօք քիչ մի միամտութիւն չկայ այս պարծանքին մէջ: Աշխարհաբարձն իբրեւ կենդանի լեզու ունի ինչ ինչ առաւելութիւններ այն գրաբարին վերայ գորհին մատենագրութիւնն կ'աւանդէ մեզ, բայց և այնպէս շատ վտանգաւոր է պոլսեան գրական լեզուն ազգային արդի լեզուին ընդունուած և վերջնականօրէն հաստատուած ձեւն համարիլ:

Մեք անպայման աշխարհաբարեան ենք, միայն պոլսեան աշխարհաբարեաններէն կը տարբերինք այնո՛ւ որ աւելի լայն մտօք աշխարհաբարեան ենք: Նոյն տարբերութիւնն ունինք Վիէննայի դըպ-ցէն ալ որ Այտընեանի քթին տակ կը գործածէ Պոլսեան աշխարհաբարն՝ մոռնալով թէ ինչ anomalies երու ծնունդ է այն և որքան անկարգ ու անկազմաւոր:

Կրնայ առարկուիլ թէ որովհետեւ գաւառաբարբառներու մէջէն ա՛յն արժանացած է գրական լինելու պատուոյն՝ չընորհիւ դիպուածոց բերման, պարտաւոր ենք կատարուած իրողութիւնն ընդունիլ, ինչ որ ուրիշ ազգաց մէջ ալ պատահած է:

Այս առարկութեան վտանգաւոր ոյժն կրնայ յաղթահարուիլ միայն այն ատեն երբ գաւառաց մէջ մամուլ ազատութիւն լինի, և Վան, Բաղէշ և այլն ունենան իրենց տեղական թերթերն ու դառնան մըշակութեան կեդրոններ: Եւ այդ թերթերուն մէջ կարդացուին «Նամակ Մուշէն» «Նամակ Սասունէն», նամակ գիւղերէն, իրենց տեղական մաքրուած հայերէնով:

Այդ երանելի աւուր սպասելով և յուսալով հանդերձ՝ կարելի է գաւառական հայերէնն ուսումնասիրել, անոնցմէ հիւթ և ոգի փոխադրել պոլսեան աշխարհաբարին: Մանաւանդ պէտք է լայնացնել մեր արդի նեղ ըմբռնումն աշխարհաբարի: Անցեալ օր թղթակից մի գրելով պատուաւոր օրագրի մի՝ Հայքի «գրաբար խմբագրականներուն» ակնարկած էր ճիշդ այն անձուկ ըմբռնումով, իբր թէ զ, ի նախդիրներու քիչ մի յաճախ գործածութիւնն բաւական է գրաբարի վերածելու մեր լեզուն: Իրողութիւնն այն է, սակայն, թէ գաւառաբարբառ կայ այսօր կենդանի, այսինքն աշխարհաբար, ուր զ նախդիրն շատ աւելի յաճակ կը գործածուի քան Հայքի մէջ: Օրինակի համար Սասունցին,

կարդալ գրել չգիտցող լեռնական, կ'ասէ Ջամու իւտամ:

Ջիմ հայրենիք զիմ հաւատք չեմ ուրա-նար:

Սլօ զմեր խէր քիչ մ'իկուզէր:

Ձընկուզէքը, զխոծորէքը, զսալորէքը, զու-ռէքը, զորթոտը կտրեցին:

ՁՄշու դաշտիմ բոլոր վարդապետները տարին:

Կը հարցնենք—ինչ անուն կուտաք այդ լեզուին, աշխարհաբար թէ գրաբար: Հարկ է ուրեմն ընդունիլ թէ «աշխարհաբար» բառն պոլսեցիք շատ նեղ իմաստով կ'առնուն, իբր թէ իրենցն լինէր կենդանի արդի հայերէնն, և թէ բուն Հայաստանի մէջ, և Հայաստանի ամենէն զուտ հայաբնակութեանց մէջ կենդանի եղող հայերէնն հաշուէ գուրս ձգել պէտք էր:

Պոլսեան աշխարհաբարն բառական խեղճութեան հետ կը կրէ շարագասական անկարգութիւն: Տաճկերէնի յետընթաց և ամիսփոխ շարագասութիւնն բառական տիրող է այդ հայերէնի մէջ, սւր սակայն եւրոպականին շարքն ալ երբեմն կ'ընդունուի: Պէտք է կարող մէկը ձեռնարկէ այս խնդիրն քննելու և ցուցնէ թէ ճշմարիտ հայերէնն ամենեւին թրքական շարագասութեան չի համաձայնիր, և ոչ ալ ճիշդ նման է, թէ և աւելի մերձաւոր, եւրոպականին: Յայդ խնդիր միսիլ չկայ մեզ այսօր, և այս յօդուած վերջացունելու ստիպուած՝ ասենք սաչափ թէ արդի հայերէնի թէ բառական հարստութեան և թէ շարագասական ուղղութեան համար—իրանին վիթխարիութեան և կերպարանին հայկազնութեան համար—պէտք է շատ հիւթ և ոգի առնուլ գաւառաբարբառներէ: Այս կերպով միայն պիտի կրնայ նա եւրոպական կիրթ լեզուաց չափն ու զօրութիւնն ստանալ յորմէ այսօր զուրկ է, և օժտել ինքզինք եւրոպականաց վերայ իսկ ինչ ինչ գերազանցութեամբ:

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան նըս գրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցեմ)

Կ. Պոլիս, Նոյ. 18, 1895

Հայուն բնաջնջման գործն կը շարունակուի, շարժումն այժմ արեւելքէն արեւմուտք կ'ընթանայ: Խարբերդ, Չմշկածակ, Բինկեան, Արաբկեր, Սեբաստիա, Կիւրին և քրեկն չըջակայ Հայերն հետզհետէ ջարդեցին, ստացուածքնին աւարի առին, կիներըն ու աղջկուքն բռնաբարեցին ու գերի տարին, և չէնքերն հոյ ճարակ ըրին: Երեկ Կեսարիոյ մասին լուր կ'ը շրջէր, այս առաւօտ Ամասիոյ ջարդին գուժն հասաւ: Հալէպի և Այնթապի քրիստոնեայք օգնութիւն և պաշտպանութիւն կը հայցեն: Մեծ Հայքէն Վան միայն գերծ մնացած է, ի փոքր Հայոց՝ Թուրքիոյ, զի Մարգուան ալ տուաւ իւր զոհն թէպէտ ուրիշներէն նուազ: Կիլիկիոյ ամեն կողմ սարսուռ կը տիրէ, հակառակ նախորդ գրածիս՝ Զէյթուն դեռ կը դիմադրէ և պիտի դիմադրէ անշուշտ մինչև որ պաշարնին հատնի: Ի մի բան վիճակնիս շատ գէշ է, Հայն արդարեւ շատ անգամ ջարդուած է բարբարոսաց կողմանէ, սակայն չեմ յիշեր ջարդ մը որ Համիտի ներկայ տուածին հետ կարենայ բաղդատուիլ:

Եւրոպացիք նախ խաբուեցան թուրք քաղաքագէտներէն, և կարծեցին թէ՛ Հայք տեղի կուտան ամենուրեք և կը գրգռեն թուրք խուժանն, սակայն քննութիւնք հաստատեցին թէ՛ սուտ է Դրան այդ առարկութիւնն, թէ՛ տերեւ իսկ չչարժիր առանց կայսեր կամաց, թէ՛ այդ ջարդերու հրաման տուողն նոյն իսկ Սուլթանն է, որպէս և տուաւ Սասունի ջարդի հրամանն: Այլ փոխան գործնականապէս դահիճ Համիտը պատժելու, կարծես անտարբերօրէն ի հեռուստ կը դիտեն ջարդերն, և կը բաւականանան ուռուցիկ ճառեր արտասանել... Սուլթանն կը խնդայ եւրոպացւոց քաղաքագէտներու վրայ և կը շարունակէ իւր հայ ցեղի բնաջնջման ծրարագրոյն գործադրութիւնն...

Պատրիարք Հայրն, տեղացի գործիչներն և բոլոր Հայերն յուսահատած են, արդարեւ յուսահատական է վիճակնիս:

Պոլսոյ զօրանոցներն պարպուեցան, ահաբեկն բանակներ կը շրջուին ի Հայս նա մանաւանդ արեւմտեան գաւառներն: Ոչ նուազ զօրք կը շրջուին Սելանիկի կողմերն: Բէտիֆներն ի զէն կը կոչուին:

Թուրք ազատականներ միշտ սպառնական թղթեր կը փակցնեն փողոցներն, կը ցրուեն ժողովրդեան և կը տեղացնեն Պալատն, Սուլթանի անկողնու վրայէն իսկ այս կարգի գրեր գտնուած են, ամեն օր պալատականներէն կասկածելիներն կը խեղդուին: Նոյն իսկ կանանոցի մէջէն շատեր զոհ գացած են: Ամեն շաբթու ազատական կարծեցեալ հարիւրաւոր երիտասարդներ կը ձերբակալուին, եւրոպի մէջ հարցաքննուելէ վերջ կ'անհետանան: Սուլթանի այս ընթացքն դժգոհներու թիւն կ'աւելցնէ: Ամեն վայրկեան ցոյցեր կ'ըսպասուին, այլ ի զուր, զի ազատականք կազմակերպութիւն չունենալուն խլրտում մ'իսկ ընելու չեն յաջողիր:

Կ'ըսուի թէ այս շաբթու խուռն բազմութիւն մը Շէյխ-իւլ-Իսլամին ներկայանալով՝ ընդդէմ Սուլթանի Ֆէթվա մը պիտի պահանջեն, և զայն յիմար հրատարակել տալով՝ զահրնկէցութիւնն պիտի խնդրեն, չեմ յուսար որ յաջողին:

ԾՈՎ

ԾՈՒՐԳԻՐ

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԻՄՇԻՄԵՆ

Յառաջիկայ գարուն, փստահաբար կրնայ նախապայտուիլ, անիշխանութիւն պիտի տիրէ Փոքր Ասիոյ մեծ մասին մէջ ծայրէ ի ծայր, և քաղաքային պատերազմն պիտի աւերէ երկիրն: Կ. Պոլիսն ալ սոսկալի խռովութեանց տեսարան պիտի լինի, ուր եւրոպացւոց ևս կեանք և ստացուածք պիտի զոհուին, և տէրութեանց մէկն կամ միւսն բուռն միջամտութիւն անել պիտի հարկադրի, որոյ արդեամբ միջազգային նախանձոտութիւններն չղթալանքը ինկելով ամենավայրագ մրցանքի մի նշանն տրուած պիտի լինի:

Այդ աղէտներու առջեւն առնուել հրնար է այժմ մինչ եւրոպիոյ համաձայնութիւնն կը տեւէ, եթէ համարձակ քաղա-

քականութիւն մի փութով ի գործ դրուի։ Քանի որ անկարելի է շարունակել կառավարել Թուրքիոյ ձեռքով, Տէրութիւնք պարտին իրենց ձեռք առնուլ կառավարութեան ղեկն։ Օսմանեան Պետութեան բաշխումն միայն բաւական պիտի լինի ճգնաժամուն պահանջմանց գոհացում տալ։

Բաշխման հետեւեալ ծրագիրն այս կամ այն անձի կամ խմբի տեսութիւնն չի ներկայացներ, այլ քննութեան կը ներկայացուի։ Առաջարկութեանց մի քանին արդէն նպաստաւոր նկատողութեան առարկայ եղած են ազդեցիկ շրջանակաց մէջ։

1. Փոքր Ասիա, բուն Հայաստանն ի միջի, պէտք է երկու գլխաւոր մասի բաժնուի, մին՝ Ալիս գետի արեւմտեան արկման արեւելեան կողմն ցՍեւ Ծով ի հիւսիսոյ, ցշղթայն Տաւրոս լեւանց ի հարաւոյ, գրաւուի Ռուսիայէ։ Ալիսի Արեւմտեան կողմն ինկող բաժինն՝ լինի Աւստրիա-Հունգարիոյ։ Միայն Չմիւռնիա և անոր մօտ ծովեղերեայ շերտն Յունաստանի տրուի։

2. Կիլիկիա, որ կիլիկեան Տաւրոսէն կը տարածուի ցմիջերկրականն, պարունակելով զՄարաշ և Ձէյթուն, պէտք է անկախ իշխանապետութեան մի վերածուի ընդ երաշխօք Եւրոպիոյ, և պատճառ չկայ իշխան չկարգելու այդ երկրին զնուպար փաշայ, իբրեւ սկիզբն։ Կիլիկիոյ մէջ Հայկական իշխանապետութիւն մի կազմելու դէմ չեն կրնար հանուիլ այն առարկութիւններ որք բուն Հայաստանի լեռնադաշտին նկատմամբ մէջ կը բերուին — այսինքն թէ օտար տարրեր խառն են և դժուար զսպելի, թէ Ռուսիա պէտք ունի զայն իւրացունելու են —, Կիլիկիոյ լեռնաբնակ Հայք ամրակազմ ժողովուրդ մ'են, իրենք իրենց հոգ տանելու լաւ կարող, և ծովով մասջելի լինելով՝ կրնայ երկիրն իրօք եւրոպական երաշխիք վայել։ Պէտք է միտք բերել թէ բուն Հայաստանի մէջ Բագրատունեաց հարստութեան անկումէն յետոյ, Կիլիկիոյ Հայկական թագաւորութիւնն կրցաւ տեւել ցամբն 1375։

3. Սիւրիա, Տիարպէքիւրի գաւառն մէկտեղ տուած, աւելի մեծ յարմարութեամբ կ'իյնայ Ֆռանսայի քան այլ ո և իցէ պետութեան։ Զօրավար Կարտոն,

տարիներ առաջ, ցոյց տուաւ թէ Սիւրիոյ մէջ ազատ ձեռք մի թողուլ Ֆռանսայի՝ պիտի շահագրգռէր զայն դիմադրելու ռուսական յառաջխաղացութեան։ Ոչ այդ հիման վերայ, սակայն, այլ ուրիշ պատճառներով, առաջարկութիւնն հաւանականաբար պիտի արժանանայ բարեհաճութեան։ Այն դերն զոր Ֆռանսա կատարեց 1860ին զՄարոնիներն պաշտպանելու մէջ, ցոյց կուտայ զինքն իբրեւ Սուլթանին բռնական ժառանգորդն այն մասերուն մէջ, և ուրիշ պատմական առիթներով ևս նա գործունէութիւն ունեցած է ի Սիւրիա։

4. Արաբիոյ վերայ բրիտանական թեւարկութեան մի հաստատումն չպիտի պատճառէր ծանր վարչական դժուարութիւններ, ըստ որում կառավարութիւնն մեծապէս պիտի լինի Արաբ շէյխերու ձեռքով։ Մէքքէ անշուշտ պիտի լինի Խալիֆի ապագայ կայանն, արաբ ցեղէն խալիֆով մի։

5. Ափրիկէի մէջ, Տրիպոլիս կը յանձնուի Իտալիոյ հոգածութեան։

6. Կ. Պոլսի մասին լաւագոյն կարգադրութիւնն կը լինի վերածել ազատ քաղաքի, ընդ եւրոպական երաշխօք, եօթն անգամէ բաղկացած միջազգային Յանձնաժողովոյ ձեռամբ կառավարելի, որոց վեցն նշանակուին մեծ տէրութիւններէն, և եօթներորդէն Զուիցերիոյ դաշնակցութեան նախագահէն։ Եւրոպական Թուրքիայէն յարմար մասեր պիտի հանուին Պուլկարիոյ, Սերպիոյ և Յունաստանի։

(Համառօտեալ Թարգմանութիւն Ֆ. Ս. Սթիվենսէնի յօդուածին՝ հրատարակեալ Տէյլի Նիւզի մէջ, նոյ 25ին։)

Օ Փ Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՍՈՎԱՏԱՆԶ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՀՍՅԵՐՈՒ

Իբր չորս ամիս առաջ Նիւ Եորք քաղաքիս մէջ կազմուեցաւ նպաստամատոյց Յանձնախումբ մի օգնելու Սասնոյ կոտորածներէն մազապուր ազատուած Հայերու։ Մինչ Ն. Ե. ի Յանձնախումբն կարգադրութիւններ կ'անէր և միջոցներ կը հնարէր Սասնոյ պէտքերն հոգալու, Հայաստանի և Թուրքիոյ բոլոր այն մասե-

րուն մէջ ուր կան մեծ թուով Հայեր, տեղի ունեցան այնպիսի ահաւոր և սոսկալի ջարդեր, գաղանական անգթութիւններ և անխնայ աւարառութիւններ որ թրքաց և Բրդերու բարբարոսութեանց զոհերու թիւն բիւրերու ելաւ, իսկ տուն տեղ, ինչք և ստացուածք, ընտանեաց նեցուկ և ապրստսի միջոցներ կորսնցնելով արտաքին օգնութեան կարօտ մնացողներու թիւը բարձրացաւ հարիւր հազարաւորներու: Յանձնախումբն իւր և հետ զհետէ տեղի ունեցած այս սոսկալի ջարդերուն և թշուառութեան ստացած ահաւոր ծաւալին՝ բազմապատկեց իւր ջանքերն ընդարձակելով օգնութեան գործը: Բանակցութեան մտաւ ուրիշ համանպատակ Յանձնախմբոց հետ, գիմումներ արաւ Նիւ Եորքի առեւտրական սենեկին, և Միացեալ Նահանգաց գլխաւոր քաղաքներու երևելի անձանց հրաւէր կարգաց Ազգային մեծ Յանձնախումբ մի կազմելու դարերու մէջ նմանը չտեսնուած թըշուառութեանց սաստկութիւնը ըստ կարի և մարդասէր Ամերիկայի ծանօթ առատաձեռնութեան համբաւոյն արժանի կերպով մեղմացունելու համար: Յանձնաժողովոյ հրաւէրներուն ի պատասխանի Նիւ Եորքի Առեւտրական Սենեակն իւր կողմանէ կարգած է վեց նշանաւոր անձեր, և ուրիշ քաղաքներէ քաջալերական լուրեր կը հասնին ցուցնող թէ Ազգային Յանձնաժողովոյ մի կազմութիւնն ու գործը պիտի յաջողին:

Կարմիր Խաչի ընկերութիւնն ալ լաւ ընդունելութիւն արած է Նիւ Եորքի Յանձնաժողովոյն գիմումներուն: Կարմիր Խաչի ընկերութիւնը, ինչպէս ծանօթ է, միջազգային մարմին մ'է աւելի քան երեսուն տէրութիւններէ ճանչցուած և յատուկ դաշնագրութիւններով վաւերացուած, պատերազմի ատեն վիրաւորելոց և հիւանդաց խնամ տանելու: Կարմիր Խաչի ընկերութեան պաշտօնէից ներկայութիւնը նաև բաւական երաշխիք է մինչև աստիճան մի զսպելու մոլեգնութիւնն վայրագ խուժանին և գայնս դրդող դիւաշունչ գազանաց ծաւալի Հայոց արեան:

Դեկտ. 14, 1895

Ա. ԱՅՎԱԶԵԱՆ

ԱՌ ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ ՀԱՅՍ

Հանրածանօթ իրողութիւն մ'է թէ ի թուրքիա, մանաւանդ երկրին ներքին գաւառաց մէջ, կենաց և պատուոյ ապահովութիւն չկայ: Այր և կին, կոյս և մանուկ հաւասարապէս նշաւակ են բարբարոս ցեղերու յարձակման: Ուստի մեզ Հայոցս անկէր գտնել կերպ մը, որով կարենայինք պաշտօնական պաշտպանութիւն պահանջել գէթ անոնց համար, որք Ամերիկայի քաղաքացիութիւնը որդեգրած են: Երկար բանակցութենէ և անձնապէս ի Ուոշինկթըն երթալէ յետոյ Միացեալ Նահանգաց արտաքին գործոց Գարտուղարէն վերջնական խոստում ստացած եմ թէ, երկրորդ պաշտօնական թուղթը ըստանալով Ամերիկեան քաղաքացի եղողներու, նոյնպէս միայն առաջին թուղթը ստանալով քաղաքացիութեան դիտաւորութիւն ունեցողներու կիճեր և զաւակուծք Կ. Պոլսոյ դեսպանին միջոցաւ Ամերիկեան կառավարութեան կողմանէ պիտի պաշտպանուին: Դիտելի է թէ պաշտպանութեան այս իրաւունք քաղաքացեաց միայն կանոնց և զաւակաց յատուկ է, քանզի անոնք միայն Ամերիկեան քաղաքացի կը համարուին ընտանեաց հօր հետ առաջի օրինաց:

Ես ջանադիր եմ ժողովել վերոյիշեալ երկու դասակարգի անձանց պաշտօնական թուղթերը, զանոնք ի Ուոշինկթըն արտաքին գործոց Գարտուղարին անձնապէս ներկայացունելու համար: Անոնք որ կը փափաքին օգտուիլ այս պատեհութենէն, հաճին թուղթերը ղրկել ինձ ի Պոսթըն: Յետ օննդեան մտադիր եմ ի Ուոշինկթըն երթալ ի մասնաւորի այս խնդրոյն կարգադրութեան համար:

Հաճեցէք սա կետերը զատ թղթի մը վրայ նշանակել և պաշտօնական թղթոյն հետ ի միասին ուղղել:

Նախ. — Տիկնոջ անունը, տարիքը և բնակութեան տեղը:

Երկրորդ. — Զաւակիդ կամ զաւակացը անունը, տարիքը, սեռը (աղջիկ թէ մանչ) և բնակութեան տեղը:

Այս կետերն յստակօրէն բացատրելու են չփոթութեան տեղի չտալու համար:

Դեկտ. 15, 1895

ՅԱԿՈԲ ՊՈՂԻԿԵԱՆ

Հասցէ — Hagop Bogigian,

22 Beacon St., Boston, Mass.

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Մարաշի մէջ Ամերիկացւոց դպրոցի շէնքերն և ճեմարանն այրեր են թուրքք կոտորածին ատեն: Խարբերդի միսիօնարաց ամբողջական կորուստն 88,000 տոլար կը հաշուի: Այնթապի մէջ երեք օր ջարդ եղեր է, բայց Ամերիկեան գոլէճն անվնաս է մնացեր: Ի Կեսարիա 200 հոգի սպաննուած են:

Հոնտոն, նոյ. 30, Բրօնիքլի թղթակիցըն Կ. Պոլսէն կը գրէ թէ Սուլթանն շատ կը խմէ եղեր վերջին քանի մի օրերս, ինչ որ չի միտի իւր մտային վիճակն բարւոքելու:

Ելմտական տազնապն այնքան սաստկացեր է ի թուրքիա որ թղթադրամ հանելու խորհուրդ յղանալ սկսեր է կառավարութիւնն:

Համիտիյէ հեծեալգործն յարձակեր են սահմանագլխի մօտ պարսիկ խօթումը գիւղին վերայ, բայց ետ մղուեր են պահապան գործէն: Հայ հայրենասէրներու զինեալ խմբեր պարսկական սահմանագլխէն կ'անցնին Վանայ գաւառն: Ասոնցմէ ոմանք երկու օր մարտ տուին համիտիյէներուն և երկուստեք շատեր ինկան:

Դեկտ. 11ին, Բրիտանացի Նիւսթի եկած հեռագիր մի Դավրէթէն, կ'ասէ «Վանէն լուր կ'առնունք թէ քաղաքին մէջ խռնուած են 50 հազար ապաստանեալներ որք նահանգին երկու հարիւր աւերեալ գիւղերէն փախած են: Թուրքք մեծապէս կը խոչընդոտեն Տր. Բիմպօլի և իւր միսիօնար ընկերաց նպաստի գործողութիւններն: Միսիօնարութեան գործըն ի հարկէ կախակայուած է առ ժամն: Վարժարանք փակուած են: Բաղէչէն տեղեկութիւն կուգայ թէ միսիօնարաց կեանք հոն ի վտանգի է, և թէ նոքա պատեհ ժամու կը սպասեն ապահով տեղ մի փախչելու համար:»

Խարբերդի միսիօնարներուն քով 400 Հայեր ապաստոնած կը մնան: Խարբերդի դաշտին բոլոր գիւղերն այրած են բաց ի Կարմրիէն:

Կոտորածոց ատեն ամեն տեղ հոգ տարած են Հայոց մեծատուններն, կղերականն, վարժապետներն սպաննել:

Զիլէի մէջ 33 Հայ մորթուած են, Հասան Գալէ ի մէջ՝ 57:

Բասէնի գաւառէն 6,000 Հայեր փախեր ապաստաներ են ի Կարին:

Արաբկեր քանդուեր է, 2,000 տունէն 150 միայն կը մնայ: Մահէ ազատուածներըն աւերակներուն մէջ փորելով պարէն կը խուզարկեն:

Հազար խանութ կողոպտեր են ի Սեբաստիա:

Ակնայ մէջ աւարառութիւն, հրկիզութիւններ և սպանութիւնք գործուած են, բայց մանրամասնութիւնք ծանօթ չեն դեռ որոց կը սպասեմք խորին անձկութեամբ:

Կ. Պոլսէն Հայեր հետեւեալ հեռագիրն, Դեկտ. 6 թուականաւ, յղած են ի Հոնտոն — «Հայաստան հոգին կը փչէ: Ջնջման գործն կը շարունակէ: Ջարդուածներու թիւն հարիւր հազարի կը հասնի: Կէս միլիոն պրծեալք ապաստան կը փնտռեն անտառաց և լեռանց մէջ ուր խոտերով և արմատներով կը կերակրուին: Քաղցն ու ցուրտ սկսած են գործել իրենց աւերանք: Յանուն քրիստոնէութեան և մարդկութեան ազատեցէք զմեզ:»

Դեկտ. 13ին հրատարակուեցաւ թերթերուն մէջ թէ Բրդերն ամեն կողմէ բազմութեամբ կը լեցուին ի Կ. Պոլիս՝ իրենց կողոպուտ վայելելու, և մայրաքաղաքին մէջ ալ աւելի ճոխ հունձք մ'անելու:

Բրիտանական պաշակ չոգենաւն Տըրայէտ և Իտալականն՝ Արքիմէտէ Հասան ի Կ. Պոլիս:

Միացեալ Նահանգաց պաշտօնական հովանաւորութեամբ այս ազգին նպաստներն Հայաստանի մէջ բաշխելու կերպն է գոր յառաջացնել կ'աշխատին այժմ չատեր և հաւանական է թէ պիտի յաջողին կառավարութիւնն մղել այդ քայլն առնելու: Հայաստան հարուածող աղէտն այնքան ահաւոր է և ընդարձակ որ մասնաւոր յանձնախմբերու և անհատից ձեռքով հարկաւոր նպաստն հասցնելանկարելի է, ուստի կ'ուզեն բարեսէրք որ նպաստն ազգային ձեռնարկի համեմատութիւններ և սրբագործումն ընդունին և բաշխման գործըն կատարուի ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ընկերութեան անդամներուն ձեռքով: Այս ընկերութիւն որ միջազգային է և պատերազմի կէջ վիրաւորելոց օգնելու նպատակաւ կազմուած է, պիտի կրնայ Հայաստանի մէջ գործելու քան զպատերազմաւելի յոռեգոյն աղէտներ կան—կոտորածներ: Այս մասին արդէն հեռագրուած է ընկերութեան նախագահին որ ի Զուիցերիա է: Քրիսչեւն Հէրալտ Դեկտ. 11ին հեռագրեց առ Քլարա Պարթըն, Ամերիկեան Կարմիր Խաչի նախագահին ի Ուոշինկթըն, խոստանալով 25 հազար տոլար հանդանակել եթէ Կարմիր Խաչն ստանձնէ գործին պատասխանատուութիւնն Հայաստանի մէջ:

Պոլէն միսիօնարներ ընդարձակ տեղեկութիւններ կը յղեն Ամերիկա որք կը հրատարակուին, և ջերմագին դիմումներով կը յորդորեն այս երկրին ժողովուրդն օգնելու բիւրաւոր տառապելոց, մանաւանդ մղելու Կարմիր Խաչի ընկերակցութիւնն յասպարէզ: Պորտի քարտուղար Պատ. Սմիթ, անդադար կ'աշխատի ազդելու Նախագահին և ընկերութեանց: Իսկ լրագրաց խմբագրականներուն թիւ չկայ: Սըն, Թրիպիւն, Ուըրլա, Թայմզ, Էտվրթայզըր, Մէյլ էնտ Էքսպրէս, և այլ մեծ թերթք գրեթէ ամեն օր խմբագրականներ ունին Թուրքիոյ մասին: Ուըրլա հրատարակեց ծաղրանկարներ ևս:

Ամերիկայի նշանաւոր երէցներէն շատերն այս օրերս իրենց քարոզի նիւթ առին Հայոց վիճակն: Յիշենք, օրինակի համար, զԹալմէճ, Պարբլ, Տիքսըն, Ռապպի Սիլվէրմէն, Մաք Արթըր:

Ուոշինկթըն, Դեկտ. 12. Թրքաց դեսպանատունն ընդունեց հետեւեալ հեռագիրըն Բ. Դոնէն: «Անցեալ ամսոյ անկարգութիւնք յստակօրէն ցոյց տուին թէ անոնք ոչ երբէք ընդհանուր հանգամանք ունէին, որովհետեւ ոչ Յոյներն և ոչ Հայ հռովմէականք ունէին հեղութիւն կրեցին Միւսիւմաններէն որոց միակ նպատակն էր վրէժառու լինիլ Հայ խռովարարներուն կանխաւ ծրագրեալ յարձակումէն:»

ԶԵՅԹՈՒՆ

Կ. Պոլիս, Դեկտ. 13. Զօրքն Զէյթունի շուրջ կը բոլորին: Թրքաց նպատակն է անսուղեւ զՀայերն և ստիպել անձնատուր լինելու: Կռիւ տեղեկագրուած է: Հայք իրենց դիրքի մէջ կը մնան վասն զի վրտահութիւն չեն դնել պաշտօնական խոստմանց թէ ապահովութիւն պիտի շնորհուի իրենց եթէ անձնատուր լինին:

Աւելի յառաջ հեռագիր մի կը ծանուցանէր թէ Թուրքք պատգամաւորներ յըղած են բանակցելու համար Զէյթունցոց հետ, բայց չեն ընդունուած սահմանէն ներս և ոչ իսկ աչքերն կապած վիճակի մէջ, այլ պարզապէս ետ յղեր են զայնս յայտնելով իրենց անվստահութիւնն նկատմամբ Թրքաց կառավարութեան:

Դեկտ. 13. Հալէպէն կը գրեն թէ ըստուգիւ քրիստոնէից կոտորած մի պիտի պատահի հոն եթէ Տէրութիւնք չմիջամտեն խափանել զայն:

Սուլթանն ճամբեր է զիւր առաջին սենեկապետն հաճի Ալի Պէկ:

Երէկուան ահաբեկութիւնն ի Կալաթա և ի Բերա, երկու Հայերու փողոցի մէջ կռուելէն առթեալ, կը ցուցնէ թէ Հանրային զգացումն որ աստիճան ձգտեալ է: Երբ Րիփօլվէրի պայթիւնն լսուեցաւ, հաւաքուած հետաքրքիրներն փախան և որոնք որ տեսան նոցա փախուստն, իրենք ալ փախան, խանութներն ի քթթել ական գոցուեցան, այս ահաբեկութեան ալիքն արագապէս հասաւ Կալաթա և Բերա, ամեն ոք ի տուն վազեց և ամրացուց դռներըն, և բովանդակ մայրաքաղաքն ահաւորագոյն կոտորածի մի ահիւն դողաց: Նոյն

խակ դեսպանատունը ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առին հասարակ տներու պէս, Բայց երկու ժամ յետոյ իմացուեցաւ թէ ինչ բանէ ծագած էր անտեղի երկրեղն և քաղաքն հանդարտեցաւ :

ՊԵՏՈՒԹԵԱՆՑ ՆԱԽԱՅԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ

Ամերիկայի Մովային Նախարարն իւր տեղեկագրին մէջ առ Նախագահն կը յիշէ օտար սզգաց համամատական ծովային զօրութիւններն :

Ֆռանսա ունի 144 մարտանաւ, 33 ալ կը պատրաստէ :

Ռուսիոյ բոլորական ոյժն կը բաղկանայ 100 մարտանաւէ, 15 զրահաւոր ալ կը շինուին :

Գերմանիա ունի 74, Իտալիա 71, Սպանիա 52 :

Մեծն Բրիտանիա է հզօրագոյնն, ունենալով այժմ ի ծառայութեան 274 մարտանաւ, 42 ալ կը շինուին :

Սախա փաշա Սուլթանէն վախնալով ապաստանեցաւ Անգլիական դեսպանատունն ուր մնաց քանի մ'օր, և վերջապէս Սուլթանին յորդորակներէն համոզուելով վերադարձաւ իւր բնակարան՝ յուսարով Թուրքիայէն մեկնելու : Սուլթանի աչքէն Սախտի ելնելուն իբր պատճառ կը զրուցեն թէ աշխատած է խելագարած յայտարարել տալ զՍուլթանն :

Ա Ռ

ԲԵՐԼԻՆՈՐԴՍ “ՀԱՅՔԻ”

Այս թերթ 1896ին ևս պիտի հրատարակուի, ինչպէս այս տարի, ամիսն երկու անգամ : Բաժանորդագրութեան պայմաններն նոյն կը մնան, այսինքն երկու տոլար, 10 Ֆրանք կամ 4 րուպլի ամեն երկուսոց համար :

Բաժանորդագներն կրնան յղուիլ հետեւեալ կերպերով :

Ամերիկեան տոլար թղթագրամ նամակի ծոցով :

Ամերիկեան փոսթ-սթէմփ նամակի ծոցով :

Մընի Օրադըր :

Օտար երկիրներէն դրամ յլելու հետեւեալ կերպերն կան :

Մընի Օրադըր :

Դրէտի Լիօնէի փոխանակագիր :

Ֆռանսական դէմպլ-բօսդ :

Նամակի ծոցով ոսկեդրամ կէս յիւրա, որ նուրբ լինելով անջօղափելի է : Եգիպտոսէն և Պուլէն այս կերպով բաժանորդագներ մեզ յղուած են ապահովապէս :

Դրամ պարունակող նամակներն ապահովագրել պէտք է :

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն Հայք ուզողներն թէ բաժանորդագրութեան մեր պայմանն է կանխիկ վճարում :

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐԱՆԻԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ :

Տետրակն կը պարունակէ Կլատիֆոնի մեծ ճառն խօսեցեալ ի Չէսթըր, և Տիլօնի յօդուածն՝ Քօնթէմփորէրի Րիվիւէն արտատպուած : Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենագորաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատարի թուրք հառափարութեան դէմ : Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ :

Գին օրինակին է 20 սէնթ : Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը արուի 15 սէնթէն :

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրատունն :

ԺԱՄԱԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճարտարապետ չոգեչարժ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաեւ ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու:

Նաեւ կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ ածան գնելով: Անոնք որ կը փափաքին ազէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբերայ չընէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին:


MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.



CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to MUNN & CO., who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A Handbook of Information concerning Patents and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the Scientific American, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. \$2 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, \$2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՆՏՈՒԿՆԵՐ

Հայերը որ շատ չեն երթար թատրոն, բայց պէտք ունին զբօսանքի և անմեղ զուարճութեան, կրնան ամենաքաղցր նրուագածութիւնը իրենց սենեակներուն մէջ վայելել, մեր այս աշխարհահռչակ սնտուկներէն գնելով: Մեր սնտուկները 50 սենթնոցէն մինչև 1,500 տալերոց են: Մարդուն կեանքին չափ երկար կը դիմանան:

Այս երկրին մէջ տարիներով գործածելէ վերջ, կրնաս հետդ տանիլ տուն իրրեւ նորանշան և ուրախացունող ընծայ մը քու սիրելիներուդ: Դիմէ առ

ԺԱՔՕ և ՈՐԴԻ JACOT & SON
39 Union Square, New York.

ՆԻՒ ԵՈՐԻ

ՀԷԹ ՀԵՈՒՋ

անունն է Ուստըրի Ֆրօնթ փողոցին մէջ

գտնուող թիւ 14 վաճառատանն,

ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,

ձեռնոց, շապիկ, օձիկ, փողկապ,

ամենն ալ

ԱՄԵՆԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն

համապատասխանող խանութն է ասի

ինչպէս արդէն շատերն փորձով տեսած

են:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԻ

ԱՄԷՐԻԿԸՆ ԷՔՍՓՐԵՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄԱՆԻ ՕՐՏՏՐՈՎ

(American Express Co.'s Money Order)

Կատարելապէս ապահով են: Այդ ընկերութեան ու իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետեւեալ պայմաններով վճարելի յետրոպա.

Ոչ աւելի քան	5 տոլար	5 սէնթ
" "	10 "	8 "
" "	20 "	10 "
" "	30 "	12 "
" "	40 "	15 "
" "	50 "	18 "
" "	100 "	30 "

Տիար Տ. Շուշան հաճած է յանձնառնել «Հայքի» գործակալութիւնն յովստոր: Բաժանորդք կրնան նմա վճարել գինն:

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ

ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆԲԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ: Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4: Շաբաթ օրերն 9էն մինչև 1:

Հասցէն է 314 Մէյն փողոց:

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.


Ա. տարի,	1	տուար	50	սէնթ	կամ	7.5	Փր.
Բ. "	2	"	"	"	"	10	Փրանք:
Գ. "	2	"	"	"	"	"	"
Դ. "	2	"	"	"	"	"	"

ՄՏԵՆՄԵՐՕՍՈՒՐԱՐԵՐ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղի նակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁէՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՖԵՐԱԿԱՆԸ, ՉԱՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳԻ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ: Գինն է 1 Փրանք (20 սէնթ) 71 երես: 1893

ՄԵՐ.ՕՆԵՐՆ

ՄԱՐԶԱՐԱՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱ-ԳԻՏԱԿԱՆՔ» Այս գիրքն կարգաւ և ըստ այնմ իրենք գիրքենք մարզել պարտին մեր երիտասարդք: Գին 50 սէնթ:



ԴԻԻՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԵԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք գէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ունէ կողմ երթալ ուղղներուն: Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու: Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին: Նոյնպէս Եւրոպայէ գէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է: Ասեմէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆԶ ԼԱՅՆԸ որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք: Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով:

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն: Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք: Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և շատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է: Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ունէ կողմ խրկել ուղղներ կամ տեղեկութիւն ուղղներ կրնան դիմել հետեւեալ հասցէին:

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին:

D. M. SHOOSHAN,
41 Exchange St., Worcester, Mass

ՅԱՆՎ ՆԻՒԹՈՅ

«ՀԱՅՔԻ»

1896

ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱՌԱՋԱՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՔ

ԱՌԱՋԱՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՔ

Եւրոպա և Հայկական խնդիրն	2
Թրքաց գաղտնիքն	8
Հայ կիներն և Հայոց խնդիրն	26
«Հայք»ի Կրօնքն ու Եկեղեցին	52
Յեղափոխութիւն ի Կ. Պոլիս	66
Յառաջդիմութիւն Հայոց	74
Քաղաքական Ոգին Հայոց մէջ	90
Թէ Հայաստան կրնայ իւրօրէն լինիլ	106
Բարեկարգութեան Ծրագիրը Հայաստանի համար	123, 146
Մեր Պայմանն	138
Բարկացած Հայոց մանչիւնն	179
Թրքահայոց մօտալուտ ձգնաժամն	179
Պուլկարիա և Հայաստան	194
Ռուսիա, Անգլիա և Հայաստան	212
Տէրութիւնք և Սուլթանն	234
Ո՞վ են Հայոց բարեկամք	253
Կ. Պոլսոյ Շարժումն	267
Աղխովմաղխով երթաս բարով	281
Եւրոպա և Հայ ցեղն	315

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ճշմարտութիւնն Հայաստանի մասին	18
Հայ գաղութք և Հայաստան	18
Հնչակ և Հնչակեանք	18
Հայրենասիրութիւնն ճշմարտութեամբ	11
Սպառու մի թրքահայոց	34
Սասուն իսկապէս ապստամբած չէր	35
Հայաստանի Աշխարհագրական դժբաղդը	35
Դիրքն քաղաքական տեսակետով	35
Սուլթան Համիտ կուրացած	35
Թուրքիոյ դէմ Պատերազմ	137
Վիզիթորիա Թագուհին և Հայք	146
Նուպար Փաշա	146
Հնչակ և Սասունցիք	147, 181
Սասունցի Դիւցազն մի	148
Ներկայ կարեւոր գործն սովիւց օգնել	194
Դաշոյն և Ազգին դաւաճանք	204
Կ. Պոլսոյ Հայ Հայրենասիրներուն	233
Մեր քաղաքականութիւնն	266

Թուրք պաշտօնէից սխալ կարծիքն	
Հայքի խմբագրին նկատմամբ	270
Հայերն մեղադրելի՞ են արդեօք յեղափոխութեան համար	282
Թուրք կառավարութեան ստախօսութիւնն	283
Առ վշտակոծ հայրենակիցս	313

ՏԻԳՐԱՆ ՍԻՆԵՒՈՅ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արդի կացութիւնն	5
Մեր Թերութիւնք	55, 67
Ներկայ Ստիպողական պարտքն	76, 110, 167, 180
Հայկական Վարդապետութիւն	125, 139
Փակե՞նք մեր բերաններն	150
ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈԹԻՒՆ	
Զօն առ Պատրիարք Իզմիրեան	78
Սասուն	127
Ի Զէն ի վրէժ	131
Բագրանցիք ինկաւ հաւար	238

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Հայկական ձգնաժամն ի Թուրքիա	80
Նոր բառարան անգլիերէնէ Հայերէն	184

ԲԱՆԱՍՏԵՂԾՈԹԻՒՆ

Այստեան և Հայերէն Լեզուն հայերէն-նի բաղդն Հայաստանի կապուած	317
---	-----

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ

ԵՒ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՔ

«Հայք» Թերթն	13, 19, 36, 51, 147, 150, 215, 307 314
Նիւ Եորքի Հայոց մէջ Միութեան խնդիրն	19, 116, 172
Փրովիտէնսի Հայերն և Միութեան խնդիրն	40, 57
Լինի Հայ Գաղթականք և Կեդրոնական Յանձնախմբի խնդիրն	40
Ուստըրի Բողոքական Հայոց համար եկեղեցի	50
Ընդհանուր շրջաբերական Հայոց Ազգային Միութեան Շիքակոյի	58
«Մշակի» մէկ խմբագրականն ի մասին Ամերիկայի Հայոց	169
Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւն	197, 220, 251, 255, 299
Հանդէս Առաջին Տարեդարձի Սասնոյ նահատակութեան ի նիւ Եորք, Օգ. 3	198
Տալբորիկցի Վարդան ի նիւ Եորք	211

Պէտք է որ Ամերիկայի Հայերն Հիմա
երթան Թուրքիոյ դէմ Պատերազմելու 300
Առ Ամերիկայի Հայո 321

Բ Ա Մ Յ Ո Ւ Բ Ի Ն Ե

ՆԱՄԱԿ
Աղէքսանդրիայէ 154
Բաղէշէ 126, 154, 274
Բարիզէ 70, 112, 155
Գահիրէէ 83, 98
Դժոխքի 204
Լինէ 131
Խարբերդէ 285
Կ. Պոլսէ 6, 128, 240
«Մովի» Թղթակցութիւնք 112, 151,
152, 153, 163, 164, 182, 182, 200, 202,
214, 230, 254, 271, 284, 303, 304, 305 319
Նիւ Պրիթէնէ 84
Պաթումէ 240
Պոսթոնէ 59, 69
Շիքակոյէ 38, 81, 100
Պուլկարիայէ 7, 41, 58, 71, 85, 187
Վիէննայէ 130
Ուստըրէ 86, 87
Ուօքիլընէ 118
Սուրապայայէ 118
Տորչէսթէրէ 168
Սանիմ Ճանապարհորդի Թղթակցու-
թիւնք. Եւրոպայէ 60
Տփղիսէ 99
Էջմիածնէ 127
Պոլսէ 203
Փրովիտէնէ 86
Քալիֆորնիայէ 82, 99, 183
Ֆիլատէլֆիայէ 23, 39, 70

Զ Մ Ն Ե Ջ Մ Ն

Աղերսագիր առ Թագուհին Անգլիոյ 177
Ամերիկայի Մամուլն և Հայկական Խն-
դիրն 230, 231, 275
Այսլենեան Արուեստագիտական Հիմ-
նարկութիւն 130
Անգլեհայկական Ընկերակցութիւնն 50,
57, 147
Առաջին նամակ Եւրոպական յատուկ
Թղթակցի ի Հայաստանէ 37
Բարեկամք Հայոց և Հայ գրականութիւն 168
Բարեկարգութեան ծրագիրն 149, 166
Զէյթուն 278, 283, 299
Թէ արդեօք Ռուսիա պիտի օգնէ՞ Հայոց 124
Թէ ինչ լուծում պէտք է տալ Հայկա-
կան Խնդրոյն (Կարծիք Մանչէսթր
Կարտիյըն Լրագրի) 97

Թուրք, Հայ և Ամերիկացի 115
Թրքաց դէմ Զայրացման Միթիւններ
Ամերիկայի մէջ 9, 13, 31, 61, 64, 129,
133, 143, 255

Իզմիրեան Սրբազան քաջարի Պատրի-
արք Հայոց 22

Լորտ Սուլպէրիի ճառն Հայաթրքական
Խնդրոյն վերայ 286

Լրագրաց կարծիքն Հայկական Խնդրոյ
մասին 241

Մրագիր Թուրքիոյ բաշխման 319
Կամախի Դէպքերն 242

Կեդրոնացման Պէտքն Հայաստանի մէջ
գործողներէն զգացուած 129, 162

Կլատտոն և Հայաստան 8

Կլատտոն նորէն կը խօսի զՀայաստանէ 203
Հայաստանի վիճակն (Տիլօնի) 216, 238

Հ. Հ. Դաշնակցութեան բացատրութիւ-
նըն Պոլսոյ ցոյցին 251

Հ. Հ. Դաշնակցութեան դիմումն առ
Միացեալ Նահանգս 300

Հայոց Կաթողիկոսին ընդունելութիւ-
նըն Զարին քով 172

Հայոց Համաժողով ի Բարիզ 149

Հարստահարութիւնք Բալուայ կողմերն 42

Մայիս 7ի մեծ ժողովն ի Լոնտոն 141

Նոր Հրատարակութիւնք 100, 133, 147,
174, 227, 245, 271

Շատ ուրախալի է
Պաշտամունք հոգեհանգստեան վասն
Սասնոյ Հայ նահատակաց 11

Ռեվիւ տէ Տէօ Մօնտ Հայկական Խնդ-
րոյն վերայ 28

ՍԱՍՈՒՆ
Տեղագրութիւն Սասնոյ. Տալոորիկ.
Վարդան Տիլօեան. Սասունցւոց Հա-
յերէնն. Սասնոյ բարեբերութիւնն.
Սասունցւոց արհեստագործութիւ-
նըն. Սասունցւոց վաճառականու-
թիւնն 227

1893ի դէպքերն. Կառավարութեան
միջամտութիւնն. 1894ի կոտորածն 235

Սուլթան Համիտ առ ոտս Լորտ Սո-
լպէրի 307

Ստոյգ տեղեկագիր ահաւոր կոտորա-
ծին Սասնոյ 20, 36, 95

Վսեմ. Զանսի Տիփիլիս տեղեկագրու-
թիւնն Սասնոյ կոտորածին վերայ 24

Տէրութիւնք և Հայաստան 316

Օգնութիւն սովաւանջ կէս միլիոն
Հայերու 320

Օր. Էլիս Սթօն Պէէքուէ 157, 161, 162

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ. Ս. Գ Ա Ք Ր Ի Է Լ Ն Ա Ն